

ալ ինքը ուզած ըլլայ այժմ աւելի աշխարհիկ գնացք մը տալ անոր. վասն զի գրեթէ այս իսկ է լեզուն գրական այն ազնուագարմ սերունդին որ մեզ ընծայեց ոճի ամենամեծ արուեստաւորներ, ինչպէս Նարայէ, Պէշիկշաշլեան, Օտեան, Թէրզեան, Աճեմեան, Տէմիրճիպաշեան, Ոսկեան, Պերպերեան, Արմէն Լուսինեան, Ելքէնճեան եւայլն. սերուն, որուն մերձաւորագոյն նախահայրն է *Նուագներուն*⁸ մեծ բանաստեղծը, եւ *Ընդ Եղեւնեաւին*⁹ մեծ գրագէտը, անհունն Ալիշան:

Այդ պերճաշուք աւանդապահ ազնուորեարին կը վերաբերի Յովհաննէս Սեթեան, իբրեւ մին անոր արդի հարազատագոյն հաւատարմագոյն ներկայացուցիչներէն: Անտարակոյս, Նահապետէն մինչեւ այսօրուան արծաթահեր բայց մրայօն յոբելեարը՝ մտաւորական ձգտումները ճշդիւ միեւնոյն ուղղութիւնը չեն պահած. բայց լեզուն որ իբր այն՝ մի՛ն է ազգի մը տեւողագոյն ինչքերէն, եւ կրնայ ըստիլ՝ ազգային նկարագրին վերացական ընդհանուր արտայայտութիւնը, ազգին դերին հետ ունի ամենասեր աղերս. այնպէս որ կ'այլափոխի՝ երբ այդ դերն է որ կ'այլասեռի, եւ իր սեփական յատկանիշները կը պահէ, երբ այդ դերն է որ կը մնայ միեւնոյն. – լեզուն, կ'ըսէմ, Ալիշանեան գրական ցեղին հայերէն լեզուն, թէեւ զուրկ կատարեալ նոյնութենէ, բայց եւ այնպէս ունի ամենահին մտաւոր ազնուականութեան մը մշտանոյն նշաններն իբրեւ ընդհանուր յատկանիշ մը, հայոց լեզուին ամենակարող քերականութենէն իր պահած ու պերճօրէն կիրարկած կերպերուն եւ անոր ամենաբաւ բառարանէն իր ժառանգած ճոխութեան մէջ, քանզի հնա՛ր է բաժնել իրարմէ ա՛յդ քերականական ձեւերը զոր կը մերժեն սակայն ոմանք, եւ ա՛յդ բառերը, որոնցմէ չեն ուզեր սակայն զրկուիլ:

Այդ լեզուն է ուրեմն Յովհ. Սեթեանի ալ լեզուն եւ քիչ բան կայ աւելի փայփայիչ մեր ազգային փառասիրութեան համար, քան տեսնել այդ լեզուին գեղեցիկ լուսակարկաչ հոսումը անոր երկին մէջ: